ՌԵԱՐԿ Ճարտարապետական Միջավայրի Ուսումնասիրության Կենտրոն
www.reark.org

ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԻՆԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Օրենքի կառուցվածքին ուղղված առաջարկներ

1. Ընդունվելիք օրենքը պետք է ձևավորվի որոշակի փիլիսոփայության և նպատակի շուրջ, որը պետք է որպես հայեցակարգ ֆիքսված լինի օրենքի սկզբում: Դրանք կարող են լինել հետևյալ կետերը.
    - *Քաղաքը իր գործառույթներով և կառուցվածքով կոչված է ծառայելու իր քաղաքացիների և հանրության համընդհանուր շահին՝ բարեկեցիկ, հարմարավետ և առողջ կյանքով ապրելուն: Քաղաքում իրականացվող ցանկացած նախաձեռնություն և ընդունվող յուրաքանչյուր օրենք պետք է բխի այդ սկզբունքից:*
    - *Այդպիսով քաղաքացիական հանրության շահը, ցանկությունն ու պահանջները օրենքի ուժով առավել են մասնավորի շահերից և իրավունքներից, ինչպես նաև իրավասու պաշտոնյաների որոշումներից:*
    - *Քաղաքը հավաքական արտահայտումն է ողջ հանրության ներկա պահանջների և արժեհամակարգի, ինչպես նաև՝ ապագայի տեսլականի: Քաղաքում իրականացվող յուրաքանչյուր նախաձեռնություն պետք է նպաստի հանրային և քաղաքային մշակույթի և հանրային կյանքի որակի բարձրացմանը, և ոչ թե բխի անհատների անձնական շահերից կամ տեսլականից:*

2. Երևանի ողջ փոքր կենտրոնը ներառել հուշարձանային ռեժիմի տակ՝ նախատեսելով կենտրոնում կառուցապատման 3 ենթառեժիմ՝
    - Անձեռնմխելի
    - Լրացումների և միջամտությունների հատուկ թույլտվությամբ
    - Համատեքստային կառուցապատում

    Հայտարարելով կենտրոնը որպես հուշարձանային գոտի՝ այնուհանդերձ որպես հայեցակարգ ընդունել, որ այն ենթակա է զարգացման, ոչ սառեցման: Այդ զարգացման ապահովման սկզբունքը պետք է լինի ոչ թե ՛թամանյանական՛ կերպարի պահպանումը/կոնսերվացումը, այլ ավելացող ցանկացած նոր շենքի կամ փոփոխության <u>գրագետ միջամտությունն ու ինտեգրումը</u> գոյություն ունեցող

պատմական շերտին: Միջամտության ու ինտեգրման թույլատրելի պարամետրերը՝ գույնը, օգտագործվող նյութը, ծավալատարածական և ճակատների կոմպոզիցիոն լուծումները, համաչափությունները և այլն, նշահարել առանձին օրենքի կետերում համապատասխան մասնագետների աջակցությամբ, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային փորձը: Կցում ենք ենք կառուցապատման մի քանի մոտեցումների առաջարկներ հավելվածի տեսքով: Առաջարկները հիմնված են Երեւան քաղաքում տարիների ընթացքում հաջողությամբ կիրառված քաղաքաշինական լուծումների պրակտիկայի վրա: Կցում ենք նաեւ Զոնավորման, Կառուցապատման դրույթների հակիրճ շարադրանք, որը փոխ է առնված միջազգայնորեն ընդունված եւ կիրառվող մեխանիզմներից:

3. Մշակել փողոցահայաց ճակատների վրա կամայական փոփոխությունների արգելման, առաջարկվող ճարտարապետական և այլ միջամտությունների թույլ տվությունների մասին օրինակակարգ: Մշակել օդորակիչների, ալեհավաքների, լուսավորման և այլ մեխանիկական սարքավորումների՝ ճակատների վրա տեղադրելու սահմանափակման կանոնակարգ:

4. Մշակել մայթերի հետիոտն և կանաչապատ հատվածի հաշվին խանութների և այլ հանրային կամ մասնավոր հաստատությունների մուտքերի կազմակերպումն արգելող օրինակարգ:

5. Մշակույթի, քաղաքաշինության նախարարությունների, քաղաքապետարանի և ճարտարապետության/քաղաքաշինության ծրագրերի իրականացման հարցերում պատասխանատու այլ պետական մարմինների կազմում նախատեսել հանրային կապերով և հանրային տեղեկացմամբ զբաղվող մասնագիտական բաժին/խումբ, որը կզբաղվի պետական կամ մասնավոր ցանկացած շինարարական ծրագրերի և նախաձեռնությունների՝ համապատասխան մեդիա միջոցներով ողջ հանրությանը, իսկ տարածքի բնակիչներին անհատական նամակագրական տեղեկատվության միջոցով ժամանակին ներկայացնելու, դրանց վերաբերյալ հանրության կարծիքը ձևավորելու և այդ ծրագրերի հետագա իրականացման ընթացքում այդ կարծիքը/առաջարկությունները պատկան մարմիններին և այլ շահառու կողմերին ներկայացնելու գործով:

Առաջարկներ քաղաքում առկա խնդիրների բարելավման վերաբերյալ

1. *Անդրադառնալ 1930-60ականների հանրային, բնակելի և արդյունաբերական ճարտարապետության ուսումնասիրման հարցին:* Հենց այս ժամանակաշրջանում կերտվեց Երևանի մեզ ծանոթ ու սիրելի կերպարի զգալի մասը, որը, սակայն, ոչ պատշաճ կերպով ուսումնասիրված է, ոչ էլ, առավել ևս, հուշարձանային կարգավիճակի տակ առնված: Նորովի ուսումնասիրել շրջանային թաղամասերը՝ 1930-60ականներին ի հայտ եկած արժեքավոր ճարտարապետական կառույցները վերհանելու համար: Այս հետազոտական աշխատանքների շրջանակում, օրինակ

´3րդ Մասի´ Գարեգին Նժդեհի հրապարակի ու հարակից փողոցների կառուցապատումը հայտարարել Խորհրդային ժամանակաշրջանի ճարտարապետական արգելոց: Քաղաքի այդ հատվածը կառուցվել է Ստալինյան ժամանակաշրջանում և իր ամբողջականությամբ իր նմանօրինակը չունի Հայաստանում: Նման պատմա-մշակութային, ինչպես նաև ճարտարապետական կարևորության համալիրներ կարելի է հայտնաբերել հանրապետության և այլ շրջաններում:

2. Անդրադառնալ ուրբանիստական արվեստի կիրառմանը՝ ընդունելով, որ փոքր ճարտարապետական ձևերը քաղաքում պետք է ոչ միայն զուտ դեկորատիվ, այլև որոշակի ֆունկցիոնալ և տարածության կազմակերպման գործառույթներ իրականացնեն: Անցկացնել փոքր ճարտարապետական ձևերով միկրոմիջավայրերի կազմակերպման միջազգային մրցույթների շարքեր՝ խրախուսելով անվանի արվեստագետների մասնակցությունը և նրանց աշխատանքներով միջավայրի կազմակերպումը Երևանի տարբեր անկյուններում

3. Վերացնել մայթերը զավթած արդեն գոյություն ունեցող մուտքային հանգույցները՝ դրանց փոխարեն մշակելով մուտքերի կազմակերպման այլընտրանքային տիպարային կամ անհատական տարբերակներ (օրինակ շքամուտքերի միջից, բակերի կողմից, և այլն): Հաստատությունների սեփականատերերին այդ նախագծային և վերականգնողական ծրագրերի ֆինանսավորման համար տրամադրել հարկման կամ այլ արտոնյալ պայմաններ:

4. Ստեղծել ստորգետնյա առևտրային տարածությունների ցանց՝ այնտեղ տեղափոխելով փողոցային ու կրպակային առևտուրը

5. Ուղղահայաց կանաչապատման սկզբունքը կիրառել կենտրոնում և քաղաքի այլ հատվածներում վերջին 10-12 տարիների ընթացքում կառուցված որոշ բազմահարկ շենքերի միապաղաղ և շրջակա միջավայրի հետ ոչ համաչափ կառույցների ճակատների վերաձևավորման և այդ միջոցով շենքերը հարակից միջավայրի մեջ վիզուալ ինտեգրման համար: Վերտիկալ այգիների նման նախագծերը կնպաստեն նոր ճարտարապետա-գեղարվեստական մշակույթի և տեխնոլոգիաների ներմուծմանը Հայաստան: Դրանք կարող են լինել նաև խոշոր ներդրումային կամ այլ բնույթի կոմերցիոն ծրագրեր՝ խրախուսելով և կազմակերպելով դրանց իրականացումը: Վերտիկալ այգիների ստեղծումը մեծապես կնպաստի կանաչ տարածությունների ավելացմանը քաղաքի կենտրոնում և այլ հատվածներում, ինչպես նաև կլուծի տիկին Ռ. Ալավերդյանի նշած ´վիզուալ ախտոտվածության´ խնդիրը, որն այլ կերպ լուծում չունի:

6. Բակային տարածքների կանաչապատման և բարեկարգման ու անցանկալի կառուցապատումից մաքրելու ծրագրերը իրականացնել տենդերների հայտարարման միջոցով՝ առաջարկելով մասնավորին իրականացնել բարեկարգման այդ աշխատանքները՝ դրա դիմաց տրամադրելով հարկման շահեկան պայմաններ վճարովի ստորգետնյա ավտոկանգառ և/կամ բակի բարեկարգման տրամաբանությունը չխաթարող մեկ փոքր առևտրային կետ կառուցելու համար: Այլապես բակերը ավտոտնակներից և մեքենաներից

բեռնաթափելու համար կարելի է նախատեսել հարակից փողոցներում երեկոյան/գիշերային ավտոկայանման պայմաններ:

7. Անցկացնել Հյուսիսային Պողոտայի ճարտարապետա-տարածական կերպարի և հանրային ֆունկցիայի կազմակերպման ճարտարապետական գաղափարների մրցույթ, ինչը կօգնի ի հայտ բերելու և իրացնելու այդ կարևոր քաղաքաշինական օղակի ողջ պոտենցիալը: Առաջարկները չպետք է ենթադրեն կոպիտ ճարտարապետական միջամտություն, այլ հիմնված լինեն լանդշաֆտային դիզայնի և փոքր ճարտարապետական ձևերի միջոցով միջավայրի կազմակերպման կոնցեպտների դուրս բերման վրա:

8. Մշակել կենտրոնի հանրային տարածքների բարեկարգման համակարգված ծրագիր, որը կնպաստի քաղաքային միջավայրի բարելավմանը, դանձնելով այն ավելի գրավիչ քաղաքի բնակիչների եւ հյուրերի համար : Ծրագրում ընդգրկել՝ Օղակաձեւ Զբոսայգին, Գլխավոր Պողոտան 2750 շատրվանների ճեմայգու միջոցով կապելով այն Մանկական եւ Անգլիական այգիների հետ: Ծրագրի իրականացման խնդիրներից մեկը պետք է լինի վերահաշվառման միջոցով բացահայտել նշված տարածքներում գտնվող անօրինական կամ ժամկետանց կառույցները, նրանց քայլ առ քայլ վերացնելու եւ ազատված տարածքները կանաչապատելու եւ բարեկարգելու համար: Ծրագրի շրջանակներում համագործակցել հասարակության լայն շրջանակների հետ, որոնք իրենց անհատույց մասնակցությամբ կաջակցեն բարեկարգման գործընթացին:

Դիտարկումներ

1. Զատել օրինագծի վերաբերյալ քննարկումների ընթացքում հնչող/հնչած քաղաքաշինական/ճարտարապետական խնդիրներին ուղղված ծրագրերն ու առաջարկությունները քննարկվող օրենքի մեջ ներառվելիք դրույթներից: Այդ ծրագրերը (այդ թվում և վերում ներկայացված մեր առաջարկները) միանվագ իրականացվելիք նախագծերի առաջարկներ են, մինչդեռ օրենքը ենթադրում է որոշակի, համընդհանուր <u>սկզբունքներ,</u> որոնք պետք է հիմք հանդիսանան ցանկացած քաղաքաշինա-ճարտարապետական գործունեության, այդ թվում նաև վերոնշյալ ծրագրերի և առաջարկությունների իրականացման համար:

2. Անդրադառնալով տիկին փոխնախարարի անհանգստությանը օրինագծի մշակման քննարկումներին հրավիրված անձնաց բացակայության, ինչպես նաև ողջ աշխատանքային գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ուզում ենք շեշտել, որ Հայաստանի Հանրապետության որևիցե օրենքի ստեղծմանը մասնակցելը մեծագույն պատիվ է յուրաքանչյուրի համար և ծառայություն է, որը անհրաժեշտության և հնարավորության դեպքում յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մատուցել իր երկրին: Այնուհանդերձ մասնակիցների՝ օրինագծի քննարկումներին մասնակցելու և դրա կազմավորման մեջ իրենց գործնական ներդրումն ունենալու մոտիվացիան, թերևս, արդյունավետ աշխատանքային

օրակարգի և հստակ աշխատանքային համակարգի ապահովման, մասնակիցների դերի և մասնակցության իմաստավորման ու ընդունվելիք օրենքի՝ ապագայում փաստացի ուժ ունենալու հանդեպ հավատի ապահովման մեջ է:

3. Անդրադառնալով քննարկման ժամանակ հնչած այն անհանգստությանը, որ անօրինական կամ ոչ նպատակային շինարարությունը քաղաքում դեռ շարունակվում է և դրա դեմն առնելը դուրս է օրենքի ուժի սահմաններից, առաջարկում ենք հետևյալը; ստեղծել ոչ պետական, ԱՆԿԱԽ մասնագետներից կազմված ԱՆԿԱԽ կազմակերպություն, որը կիրականացնի վերահսկողություն ընթացող և իրականացվելիք շինարարական նախագծերի վրա և միաժամանակ կհանդիսանա նախագծային ողջ փաթեթի՝ մինչ քաղաքապետի կողմից հաստատվելը, ամփոփ կազմված և փորձագիտական ու մասնագիտական բոլոր պահանջվելիք պարամետրերին համապատասխան լինելու մասին վերջնական եզրակացություն տվող ինստանցիան: Կազմակերպությունը պետք է լինի անհասանելի թե քաղաքացիների, թե կառավարության անդամների համար:

Հարգանքներով՝

ՌԵԱրկ Ճարտարապետական Միջավայրի Ուսումնասիրության Կենտրոն

Ա. Ասատրյան
Վ. Գալստյան
Ե. Սարգսյան

Նախագահ՝ Ե. Սարգսյան

30.08.2012